թեան՝ հեռանում են գիւղից և ապաստան գտնում հայաբնակ գիւղերը։

Այժմ գիւղում բնակւում են 30 տուն հայեր 230 շընչով, որից 125-ը արական է և 115-ը իգական։*

Այստեղ առաջ եմ բերում 1856—1918 թուերի ստատիստիկան.

ՎԻՃԱԿԱԳԻՐ ՔԵԱՐԻԱՆԴ ԳԱՒՍԻՆԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՈՒԹԵԱՆ									
Գիւղերը	Տուն — Շունչ					1918			
	1856թ.	1880թ	1888թ	1903թ.	1910թ.	Տուն	Արու	Էգ	Միասին
Դովլաթաբատ	—	16-100	25-213	44-275	54-462	40	158	162	320
Վերին-Քրդեր	20-132	21-127	25-194	45-270	55-447	30	125	115	230
					Ընդամենը	70	283	277	560

Ահա այս է սիրելիս, Քեարբանդի գիւղացիութեան պատկերը։

Ծանր տպաւորութիւնների տակ՝ այսօր հեռանում եմ Քեարբանդից, թողնելով այնտեղ խեղճ գիւղացիներին իրենց ծով վշտերի հետ . . . ։

Ընդունիր սիրելիս, վերջին նամակս։

Կարօտագին բարևներով

Քո՝

ԱՐԱՄ

---

* Այստեղ արձանագրում ենք Քեարբանդում պատահած հետևեալ սրտաճմլիկ դէպքը, որ սովի հետևանքն է։ Գիւղացիներից Այվազ Մարգարեանը սաստիկ քաղցից յուսահատուած, գիշերով գողանում է իր դրացու ոչխարներից մէկը և թոնրում եփելով ուտում իր ընտանիքի անդամների հետ։ Հետևեալ օրը Զաքարիայի աղջիկը ոչխարատիրոջ խոստովանում է հօր յանցանքը։ Հայրը լսելով որ աղջիկը մատնել է իրեն՝ սաստիկ յուսահատութիւնից մորթում է իր ինն և տասն և մէկ տարեկան աղջիկներին։